

ՎԼԱԴ ԲԸՆԸՅՅԱՆՈՒ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Ռուսինական ժողովրդական Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանում իր ծննդյան 60-ամյակը բոլորեց Ռուսինացի բազմամասնակ գիտնական, պրոֆեսոր-դոկտոր Վլադ Բենըցյանուն:

Անվանի գիտնականը երկար տարիների իր բեղուն և բազմաթիվ ուղևորական ստեղծագործական կյանքի մի մասը նվիրաբերել է հայագիտությանը: Հակառակ Ռուսինիայում անցյալում տիրող անբարենպաստ պայմաններին, նա դեռ երիտասարդական հասակից ջերմորեն խանդավառվում էր Սովետական Հայաստանի առօրյայով և գիտության նվաճումներով:

Պրոֆ. Բենըցյանուն ծնվել է 1900 թվականի օգոստոսի 22-ին, Ռուսինիայի Տիմիշոարա քաղաքում: Չերնովիցի համալսարանը ավարտելուց հետո, նա իր մասնագիտական ուսումը շարունակել է Փարիզում, Լոնդոնում և Դուբլինում (1924—1932): Ապա ուսումնասիրական ճանապարհորդություն է կատարել Ալբանիայում (1933): Ստացել է իրավաբանական գիտությունների դոկտորի (1923) և բանասիրական գիտությունների դոկտորի (1931) գիտական աստիճաններ: Ավարտել է Փարիզի Արևելյան լեզուների ազգային վարժարանը (1928), ինչպես նաև Փարիզի բարձրագույն դպրոցը (1932), ներկայացնելով «La traduction arménienne des tours participiaux grecs» հայագիտական աշխատությունը: Ավարտել է նաև Փարիզի արևելյան դպրոցը (1932): Եղել է անդամ Փարիզի Ռուսինական դպրոցի:

Որպես լեզվաբան, պրոֆ. Բենըցյանուն հմտացել է հնդեվրոպական համեմատական լեզվաբանության մեջ և տիրապետել բազմաթիվ հին ու նոր լեզուների (սանսկրիտ, հայերեն, հին պարսկերեն, հունարեն, լատիներեն, կելտական լեզուներից գալլերեն ու իռլանդերեն, հոլանդերեն, ալբաներեն, սլավոնական մի շարք լեզուներ, որոնց մեջ նաև ռուսերեն, եվրոպական նորագույն լեզուներ և այլն):

Չնայած ձևաբանության խոր պատրաստության, հայերենի վերադառնալով պրոֆ. Բենըցյանուն այն ժամանակվա տիրող կարգերի հետևանքով 1930—1938 թթ. ստիպված է լինում



անվճար դասախոսել Չերնովիցի համալսարանում հնդեվրոպական համեմատական լեզվաբանություն, դասական հայերեն, սանսկրիտ, հնդեվրոպական լեզուների գրականություն, հին պարսկերեն, գերմանական լեզուների համեմատական հնչյունաբանություն և ձևաբանություն: Ընտանիքի գոյությունը ապահովելու համար նա հարկադրված էր զբաղվել այլ գործերով ևս: Եղել է Չերնովիցի համալսարանի գրադարանի վարիչ և իր նախաձեռնությամբ նույն քաղաքում 1938 թվականին հիմնադրված Ն. Յորգայի անվան քաղաքային գրադարանի ղեկավար:

Ռուսինիայում դեմոկրատական կարգեր հաստատվելուց հետո էր, որ պրոֆ. Բենըցյանուն Երևանում համալսարանի բանասիրական ֆակուլտետում նշանակվեց հնդեվրոպական լեզուների համեմատական հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության, օսկերենի ու ումբրերենի և հին պարսկերենի դասախոս: 1948—1953 թթ. Ռուսինական ժողովրդական

Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում նա դասախոսել է դասական հայերեն, հայ ժողովրդի պատմություն և այլն: 1954 թվականից սկսած մինչև այսօր նա դասախոսում է Բուխարեստի Մանկավարժական ինստիտուտում լատիներեն և սլավոներեն: 1958 թվականից ստանձնել է նաև ՌԺԲ-ի Գիտությունների ակադեմիայի Հնդեվրոպական լեզվաբանության սեկտորի վարիչի պաշտոնը:

Պրոֆ. Բրնրցյանուն անսպառ եռանդի ու մեծ նախաձեռնության տեր գիտնական է: Հատկապես կարևոր են նրա ծառայությունները բանասիրական հանդեսների հիմնադրման, ինչպես նաև գիտական ընկերությունների ստեղծման գործում: Գիտական մեծ արժեք է ներկայացնում նրա հիմնադրած և տարիներ շարունակ (1938—1947) խմբագրած «Revue des Etudes Indo-Europeenes» ֆրանսերեն եռամսյա պարբերականը, որտեղ աշխատակցել է նաև եվրոպացի հայտնի գիտնականներ: Այդ պարբերականին աշխատակցել է նաև պրոֆ. Նիկողայոս Ազոնցը:

1956 թվականին պրոֆ. Բրնրցյանուի նախաձեռնությամբ Բուխարեստում ստեղծվեց պատմա-բանասիրական գիտությունների ընկերության ուսման արևելագետների բաժանմունք՝ 15 աշխատանքային խմբակներով: Դարձյալ ինքն է, որ նախաձեռնել է նույն բաժանմունքի օրգան «Studia et Acta Orientalia» հանդեսի հրատարակումը, որի առաջին համարը լույս տեսավ 1958 թվականին և իր ճոխ ու այլազան բովանդակությամբ հանդիսացավ Ռումինիայի արևելագետների մեծ հաջողությունը: Վերջերս լույս են տեսել այդ հանդեսի II և III համարները:

Պատկառելի թիվ են կազմում պրոֆ. Բրնրցյանուի գիտական աշխատությունները: Նա հրատարակել է բազմաթիվ մենագրություններ և ուսումնասիրություններ, որոնք լույս են տեսել ինչպես Ռումինիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ Ռումիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, հայերեն, պարսկերեն և այլ լեզուներով:

Պրոֆ. Բրնրցյանուի վաղ գործերում կան ուսումնասիրություններ՝ նվիրված ումիդական մատենագիտության և ձեռագրագիտության հարցերին, հետազոտություններ լատիներեն լեզվի բերականության վերաբերյալ, իուլանդական լեզվի և գալլական բանասիրության վերաբերյալ ուսումնասիրություն ու բնագրերի հրատարակում: Մի քանի ուսումնասիրություններ նվիրված են հին հունական անուններին: Նա հրապարակել է Սուլավա բաղարի պատմական վայրերի ուղեցույց հատորը, հայ լեզվի և պատմության հարցերին վերաբերող գործեր, «Երև-վույթներ Ալրանիայից» սովոր հատորը, պատ-րաստել է հնդիկ մեծ բանաստեղծ Ռարինդրա-նատ Տագորի կյանքին և գործունեությանը նվիրված ծավալուն մի աշխատություն, որը մամուլի տակ է:

Պրոֆ. Բրնրցյանուն երկար տարիներ շարունակ ուսումնասիրել է նաև հայերեն հին ու նոր լեզուները, հայ ժողովրդի պատմությունն ու գրականությունը: Նա աշակերտել է և աշխատակցել նշանավոր հայագետներ Անտուան Մեյլին, Նիկոլայ Յորգային, Ֆրեդերիկ Մակլերին, Հուի Մարինսին:

Պրոֆ. Բրնրցյանուի գրչին են պատկանում մի շարք արժեքավոր հայագիտական աշխատություններ: Նրա հայագիտական ամենակարևոր աշխատություններից է «La traduction armenienne de tours participiaux grecs» գիրքը, որ լույս է տեսել Բուխարեստում, 1937 թ. (ֆրանսերեն): Այս աշխատության մեջ հեղինակը հմուտ կերպով ուսումնասիրել է հունարեն դերբայներով կազմված դարձվածքների հայերեն հնագույն թարգմանությունները: Նա ուսումնասիրության է ենթարկում V դարի հայ դասական ինքնուրույն, ինչպես նաև թարգմանական գրականության կարևորագույն հուշարձանները՝ 2. Ոսկերեանի Մատթեոսի մեկնությունը, Եզնիկը, Ազաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը և հատկապես Ղուկասի ավետարանը, մի խոսքով այն բոլոր հնագույն բնագրերը, որոնք լի են հունարենին հատուկ դարձվածքներով: Պրոֆ. Բրնրցյանուն մանրազնին համեմատական ուսումնասիրության ենթարկելով աղբյուրների հայերեն թարգմանությունները, բարձր գնահատակա՞ն է տալիս հայ թարգմանիչներին:

Հայ լեզվաբանությանը վերաբերող ավելի փոքր աշխատություններից է «Posibilitățile de exprimare a participiului în armeană clasică» (1937) ումիդներեն ուսումնասիրությունը: Այստեղ հեղինակը քննության է առնում գրաբարում դերբայի արտահայտչական հնարավորությունները, այսպիսով ամբողջացնելով իր նախորդ աշխատությունը:

Իրեն բազմակողմանի հայագետ, պրոֆ. Բրնրցյանուն զրադվել է նաև դարեր շարունակ ումիդնացիների հետ կողր-կողքի ապրող հայերի պատմության հարցերով: Նա ումիդահայերի պատմության հակիրճ ամփոփումը տվել է իր «Armenii în istoria Si viața romanească» (1937) ումիդներեն գրքուկով: Վերջին տարիներս շարունակելով ուսումնասիրել ումիդահայերի պատմությունը, նա կանգ է առել այդ պատմության համար էական նշանակություն ունեցող մի շարք հարցերի վրա:

Պրոֆ. Բրնրցյանուն գրադվում է նաև հայ ժողովրդի հին պատմության հարցերով: Ուշագրավ են նրա «Հայերը Ինհիսթունի արձանագրությունների մեջ», «Հայկական հնագույն հիշատակությունը Հայաստանում բնակեցված բուլղարների մասին», «Հայ Արշակունիների ծագման հարցը» և այլ ուսումնասիրություններ: Նրա ուշագրությունից չեն վրիպում նաև հայ գրականության և ընդհանրապես հայ մշակույթի պատմության վերաբերող հարցերը: Նա հողավածներով անդրադարձել է հայ մեծ լուսավորիչ և Աբովյանի, ինչպես նաև հայ ռեուլուցիոն-դեմոկրատ Միրայել Նալբանդյանի գործունեությանը:

Պրոֆ. Բրնրցյանուի նախաձեռնությամբ հիմնադրված Արևելագիտական բաժանմունքի 15 աշխատանքային խմբակներից երկուսը գրադվում են հայագիտության, խմբակներից մեկը գրադվում է դասական հայերենով, իսկ մյուսը՝ հայ նոր գրականության և լեզվի հարցերով:

Պրոֆ. Բրնրցյանուն երկար տարիներ ղեկավարել է նաև ՌԺԲ-ի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում հայ դասական լեզվի դասընթացները: այնտեղ նա դասավանդել է գրարարի քերականություն, հայ ժողովրդի պատմություն, հայ հին և միջին դարերի գրականության պատմություն և հնագրություն:

Պրոֆ. Բրնրցյանուն 20 տարի է, որ հանդես է գալիս մի շարք հայագիտական արժեքավոր գեկուցումներով, ծանոթացնելով հայ մշակույթը ռումինացիներին և հայերին: Այդ հրապարակային գեկուցումներից հիշատակենք միայն մի քանիսը. «Հայերը Ռումինիայում», «Հին Հայաստանի մշակույթը», «Ամենահին արձանագրություններ Հայաստանի և հայերի մա-

սին», «Մեծ դեմքեր հայ մշակույթի պատմության մեջ», «Հայ միջնադարյան քնարերգությունը» և այլն, և այլն:

Պրոֆ. Բրնրցյանուն ռումինահայության լավագույն բարեկամներից է, նա ղեկավար-ակտիվիստներից մեկն է Բուխարեստի «Ստեփան Շահումյանի անվան Հայ մշակույթի տան» և ղլխավոր աշխատակիցներից մեկը՝ «Նոր կյանք» հայկական շաբաթաթերթի, նա իր օգտավետ խորհուրդներով հաճախ մասնակցում է տեղի Հայ մշակույթի տան ղեկավար խորհրդի նիստերին, հանդես է գալիս հայ գաղութի անդամների առաջ գիտա-հանրամատչելի գեկուցումներով: Նա մեծ համակրանքով է հետևում Սովետական Հայաստանի առօրյային: Պրոֆ. Բրնրցյանուն Սովետական Հայաստանի մասին հաճախ հանգես է գալիս հրապարակային գեկուցումներով և հողավածներով:

Պրոֆ. Բրնրցյանուի մեծագույն ցանկություններից մեկն է՝ Ռումինիայի, Լեհաստանի և Չեխոսլովակիայի ժողովրդական ռեսպուբլիկաների հայադեմոկրատիկ գործակցությամբ հրատարակել Եվրոպայի հայագիտական հանդեսը: Նրա շուրջը համախմբել արտասահմանում գործող հայադեմոկրատներին:

Ռումինական ժողովրդի տաղանդավոր գավակ, բազմահմուտ դիտնական և նվիրված հայադետ պրոֆ. Վլադ Բրնրցյանուն իր ծննդյան 60-ամյակը դիմավորում է գիտական ստեղծագործությունների բուռն ծաղկման շրջանում: Ինտուիցիոն բնոհանրապես և հայագիտությունը մասնավորապես տակավին շատ սպասելիքներ ունեն նրանից:

Հարգելի պրոֆեսորին ի նրտե ցանկանում ենք առողջություն, երկար կյանք և նորանոր հաջողություններ իր գիտական գործունեության մեջ: Ս. ՔՈՂԱՆՁՅԱՆ

* * *

Պրոֆ. Վլադ Բրնրցյանուի հայագիտական աշխատությունները

1. La traduction armenienne des tours participiaux grecs, București, 1937, 153 p. (Հունարեն դերբայներով կազմված դարձվածքների հայերեն թարգմանությունը):
2. Armenii în istoria si viața romaneasca, București, 1937, 57 p. (Հայերը ռումինական պատմության և կյանքի մեջ, Բուխարեստ):
3. Posibilitățile de exprimare a participiului în armeana clasica, «Պահակ», Հայաստանյան շաբաթաթերթ, Բուխարեստ, 1937, հունվար (Իերրայի արտահայտչական հնարավորությունները հայերեն դասական լեզվում):
4. Un jubileu cultural, Revista „Ani“, 1938, № 3, București, p. 61—65 (Մշակութային մի հորելյան «Հանդես ամսօրյա» պարբերականի հրատարակման հիսուհամյակի առիթով (գեկուցում), 3 նոյեմբերի, 1937):
5. Calauza ținutului Suceava (O descriere a manastirilor și bisericilor Bucovinenei), Cernăuți, 1938, 274 p. E. Knittel-ի հետ (Ուղեցույց Սուչավա գավառի (Բուկովինայի վանքերի և եկեղեցիների նկարագրություն). 2երնովից, 1939, 274 էջ):

6. Necrolog; Nicolas Adontz, „Revue des etudes indo-europeenes“, IV, 1947, Bucuresti, p. 252—253 (*Մահախոսական. Նիկողայոս Ադոնց*):

7. Հայ գրական լեզվի միասնականությունը, «Նոր կյանք», Բուխարեստ, 26 հոկտեմբերի, 1954, № 38 (225), 3 հոկտեմբերի, № 39 (226), 10 հոկտեմբերի, № 40 (227):

8. Կերակ Ասարի—ոումեն մշակույթի բազմաթիվ մր (մահվան 85-ամյակին առթիվ), «Նոր կյանք», 21 նոյեմբերի, 1954, № 46 (233):

9. Մ. Նալբանդյանի քաղաքական գործունեությունը, «Նոր կյանք», 12 դեկտեմբերի, 1954, № 49 (236):

10. Հայ մր Բաբելոնի ժողովրդական ապստամբության մր պարագլուխ, «Նոր կյանք», 6 փետրվարի, 1955, № 26 (244):

11. Առաջին տեղեկությունները Հայաստանի մասին և Դարեհի դեմ հայ ժողովրդի ապստամբության ընկերային տնտեսական ներքին ծալքը (զեկուցման ամփոփում), «Նոր կյանք», 11 մարտի, 1955, № 11 (249) և 18 մարտի, 1955, № 12 (250):

12. Հայ գրականության պարծանքը (Խ. Արուվյանի ծննդյան 150-ամյակին առթիվ), «Նոր կյանք», 11 նոյեմբերի, 1955, № 46 (284):

13. Հայկական ամենահին ձեռագիրը, «Նոր կյանք», 18 նոյեմբերի, 1955, № 47 (285):

14. Ողջուն Սովետական Հայաստանի 35-րդ տարեդարձին, «Նոր կյանք», 25 նոյեմբերի 1955, № 48 (286):

15. Հայ Արշակունիներու ծագման հարցը, «Նոր կյանք», 20 հունվարի, 1956, № 3 (294):

16. Հին հայկական վկայություններ Մուսուլմանի քաղաքներու մասին, «Նոր կյանք», 10 փետրվարի, 1956, № 6 (297):

17. Հին Հայաստանի մեջ Պուլկարներու գաղթի կապակցությամբ, «Նոր կյանք», 1 հունիսի, 1956, № 22 (313):

18. Քուրթեա տե Արճեշի Լախսկոպոսական եկեղեցիին հայ ճարտարապետները, «Նոր կյանք», 26 հոկտեմբերի, 1956, № 43 (334), 9 նոյեմբերի, 1956, № 45 (336):

19. Elementul ir mediopasiv în armeană clasică, „Materialele sesiunii Stiințifice a Institutului Pedagogic, București, 1957, 17 p. (Իրավորակերպ չեզոք մասնիկը դասական հայերենում):

20. Activitatea secției de studii orientale, „Studii“ Revista de istorie, Academia RPR, București, 1957, № 4, p. 246—248 (Արևելագիտական սեկտորի գործունեությունը):

21. Activitatea în domeniul studiilor orientale, „Studii“ Revista de istorie, Academia RPR, București, 1957, № 6, p. 213—215 (Գործունեությունը արևելագիտական ուսումնասիրությունների բնագավառում):

22. Les Arméniens des inscriptions de Behistun, „Studia et Acta Orientalia“ I, 1957, p. 65—81 (Հայերը Բեհիսթունի արձանագրություն մեջ):

23. La plus ancienne mention arménienne a propos des Bulgares colonisés dans l'Arménie. „Studia et Acta Orientalia“, I, 1957, p. 354—356 (Հայերեն հնագույն հիշատակությունը հին Հայաստանում հաստատված բուլղար գաղթականների մասին):

24. ՌժՌ-ի արևելագետներու գործունեության սկզբնավորությունը, «Նոր կյանք», Բուխարեստ, 20 դեկտեմբերի, 1957, № 50 (303), նաև «Լրաբեր», Նյու-Յորք, 18 մարտի, 1958, № 104:

25. ՌժՌ-ի արևելագետներու գործունեությունը, «Նոր կյանք», 1 հունվարի, 1958, № 1 (394), նաև «Լրաբեր», Նյու-Յորք, 20 մարտի, 1958, № 105:

26. Հին հայերու տոմարը, «Նոր կյանք», 13 հունիսի, 1958, № 24 (416):

27. Սիրենը հայկական վարժարանը, «Նոր կյանք», 8 օգոստոսի, 1958, № 32 (424):

28. Ընկերային բախումներու հարցը Մխիթար Գոշի մոտ, հեղինակ Դ. Ղժրիկյան (գրախոսություն), «Նոր կյանք», 15 օգոստոսի, 1958, № 33 (425):

29. Հայկական անվանակոչումներ ուսմանական տեղանուններու մեջ (Հայերու ներկայությունը փաստող տվյալներ), «Նոր կյանք», 12 դեկտեմբերի, 1958, № 441, 26 դեկտեմբերի, 1958, № 443 և 2 հունվարի, 1959, № 1 (444):

30. Հայկական տեղանուններու վերաբերյալ նոր խնդիրներ Մուսուլմանի տեղանուններուն մեջ, «Նոր կյանք», 24 հունիսի, 1959, № 30 (473):

31. Հայկական տեղանուններ Մունթենիո մեջ, «Նոր կյանք», 28 օգոստոսի, 1959, № 35 (478), 4 սեպտեմբերի, 1959, № 36 (479), 11 սեպտեմբերի, 1959, № 37 (480);
32. «Արճեշու» ռումանական տեղանվան շլուծված խնդիրը, «Նոր կյանք», 9 հոկտեմբերի, 1959, № 41 (484), 16 հոկտեմբերի, 1959, № 42 (485), 23 հոկտեմբերի, 1959, № 43 (486);
33. Հին ձևագրերու նոր հայտնաբերումներ Սովետական Հայաստանի մեջ, «Նոր կյանք», 27 նոյեմբերի, 1959, № 48 (491);
34. R Tagore in Armenian Translation, The Visva—Charati, Quarterly, Santiniketan West-India, 1959 (Խ. Տադորը հայերեն թարգմանված):
35. Sufixe urartice în armeană clasică, „Studii Si cercetari lingvistice“, 1960, № 1, Bucuresti, p. 73—101 (Սուրարտական ածանցները դասական հայերենում):
36. Armenii în toponomia romîneasca Si toponomice romînești de origine armeană, „Studii Si cercetari lingvistice“, 1960, № 2, Bucuresti, p. 201—217 (Հայերը ռումինական տեղանունների մեջ և հայկական ծագումով ռումինական տեղանուններ):

Անտիպ և բնագրի մեջ եղող գործեր

1. Cultura Si civilizația în Armenia veche. Հ. ձ. Սիրունիի և Գ. Բընըցյանուի հետ (Հին Հայաստանի մշակույթը և քաղաքակրթությունը):
2. Album paleografic armean (Հայ հնագրության ալբոմ):
3. Gramatica limbii armene clasice (Հայերեն դասական լեզվի քերականություն):
4. Հայկական տեղանունները Ռումինիայում (ղերմաներեն):
5. Demnitari armeni în trecutul Moldovei (Հայ բարձր պաշտոնատարներ Մոլդովայի անցյալում):
6. Sufixul numelor de arbori în armeană clasică (Ծառերի անունների ածանցները դասական հայերենում):
7. Sufixul k al pluralubui în armeană clasică (ք հոգնակերտ ածանցը դասական հայերենում):
8. Urme ale genului feminin în armeană clasică (Իգական սեռի հետքերը դասական հայերենում):
9. Etnogeneza armeană (Հայերի ծագումը):
10. Articolul postpus în armeană clasică (Հետդիր հոդը դասական հայերենում):
11. Vocalele protetice în armeană (Նախահավելվածային ձայնավորները հայերենում):
12. Polarizarea semantica (enantiusemia) în limbile indo-europene (Իմաստարանական բևեռացումը հնդեվրոպական լեզուներում):
13. Vechile numiri de luni armene (Ամիսների հին հայկական անունները):
14. Termenii de inrudire în limba armeană (Ազգակցական տերմինները հայերենում):

ՎԻՃԱԿԱՆ ՍԱՐՈՅԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԴԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 14-ին Երևան ժամանեց ամերիկյան ականավոր գրող Վիլյամ Սարոյանը և հանդիպումներ ունեցավ Հայաստանի աշխատավորների, մտավորականների, գրողների, արվեստագետների, գիտնականների հետ։ Անվանի գրո-

րականի աստղադիտարանը, ուր հանդիպում ունեցավ Ակադեմիայի պրեզիդենտ, Բյուրականի աստղադիտարանի գիրեկտոր, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի և աստղադիտարանի գիտաշխատողների կոլեկտիվի հետ։



Ձախից աջ՝ գրող Վ. Սարոյանը, ժողովրդական նկարիչ Մ. Սարյանը և ակադեմիկոս Վ. Համբարձումյանը Եյուրականում

ղը սեպտեմբերի 17-ին եղավ Հայկական ՍՍՌ Դիտույթյունների ակադեմիայում, հանդիպում ունեցավ Ակադեմիայի մի խումբ գիտնականների հետ։ Վ. Սարոյանը այցելեց նաև Հայկական ՍՍՌ Դիտույթյունների ակադեմիայի Բյու-

Անվանի գրողի և ռեսպուբլիկայի գիտնականների հանդիպումներն ու զրույցները ամենալավ անցան ջերմ մթնոլորտում։ Սեպտեմբերի 22-ին Վիլյամ Սարոյանը մեկնեց Մոսկվա։ Ա. ԲԱԴԱՆՅԱՆ

ՊՐՈՖ. ՍԵՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Այս տարի օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում, որպես Հայկական ՍՍՌ ԳԱ հյուր Երևանում էր գտնվում Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, բյուզանդական և հայկական միջնադարյան արվեստի մասնագետ, արվեստագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանը։

Հանդիսանալով անվանի բյուզանդագետ Դիլի և բյուզանդական արվեստի հայտնի պատմաբան Միլեի աշակերտը, Ս. Տեր-Ներսեսյանը ճանաչված է ոչ միայն որպես հայագետ, այլև մեծ համարում ունի որպես բյուզանդագետ։ Նրա գիտական տեսահորիզոնը ընդգրկում է նաև դպրա-եղիպական, ուղղափառական ու վրացական արվեստների պատմությանը վերաբերող հարցեր։

Ավարտելով Սորբոնի համալսարանը, նա 1927—1930 թթ. դասախոսում է նույն համալսարանի բաժիններից մեկում։ 1930 թ. հրավիրվում է Վեյլի կոլեջ՝ որպես պրոֆեսոր և ղեկավարվելու պատմության սեկցիայի տեսուչ։ 1936 թ. նա իր երկու աշխատությունների համար (մեկը XII—XIV դդ. հայկական մանրանկարչությանը նվիրված ուսումնասիրություն է, մյուսը՝ «Բարեղամի և Հովասափի պատմությունը» խորագիրը կրող XI—XVII դդ. հունարեն ձևագրերի մանրանկարներին նվիրված ուսումնասիրություն), ստանում է դոկտորի գիտական աստիճան։ 1946 թվականից նրան մեկնոր տեսնում ենք Հարվարդի համալսարանում որպես բյուզանդագիտության ինստիտուտի ղե-

ղարվեստի բաժնի պրոֆեսոր Ս. Տեր-Ներսեսյանը Սմիտ կոլեջի և Ուիլսոն կոլեջի պատվավոր դոկտոր է, ինչպես և Ամերիկյան Միջնադարյան ակադեմիայի անդամ:

Բացի բյուզանդական և այլ արվեստների պատմությանը նվիրված շուրջ 30 աշխատություններից, նա հրապարակել է մի շարք լուրջ ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են հայկական միջնադարյան արվեստին:

Բրանցից առավել կարևորների թվին է պատկանում 989 թվականի «Էջմիածնի ավետարանին» նվիրված աշխատությունը¹ Պրոֆ. Ստրիգովսկին դեռ 1891 թ. հրապարակած իր աշխատության մեջ՝ «Էջմիածնի ավետարանի» մանրանկարները համարում է ոչ թե հայկական, այլ սիրիական: Մոտ 40 տարի այս տեսակետը իշխում էր գրականության մեջ: Ս. Տեր-Ներսեսյանը միանգամայն համոզիչ կերպով ցույց տվեց, որ «Էջմիածնի ավետարանի» մանրանկարները արմատապես տարբերվում են սիրիական մանրանկարչության ոճից և իրենց առանձնահատկություններով շատ ավելի մոտ են IX—X դդ. հայկական մանրանկարչության ոճին: Այսպիսով, նա կարողացավ ապացուցել, որ այդ մանրանկարները ոչ թե սիրիական են, այլ հայկական: Այս հարցի ճիշտ լուծումը խոշոր նշանակություն ունեւ հայկական միջնադարյան արվեստի, մասնավորապես մանրանկարչության գեներիսի պարզաբանման համար:

Մի այլ առիթով Ս. Տեր-Ներսեսյանը վիճարկում է Ստրիգովսկու հայտնած և երկար ժամանակ ճանաչում գտած այն տեսակետը, որ հայերը մինչև X դ. չեն ունեցել իրենց ազգային գեղանկարչությունը: Վրթանես Քերթոզի (VI դ. վերջ և VII դարի սկիզբ) «Յաղագս պատկերամարտութեան» թղթի ուսումնասիրության կապակցությամբ² նա ցույց է տալիս, որ Հայաստանում նկարչությունը և մանրանկարչությունը զարգացած են եղել դեռ VII դարում: Հետագայում դա հաստատվեց նաև Լ. Ա. Դուրանովի կողմից հայտնաբերված և ուսումնասիրված ավելի կոնկրետ փաստերով:

Հաջորդ աշխատությունը ֆրանսերեն լեզվով հրապարակած մի կապիտալ ուսումնասիրու-

թյուն է իր ճոխ ալբոմով: Այստեղ մանրամասն ոճական վերլուծման ենթարկվում է ենետիկի Ս. Ղազարի վանքում պահպանվող 9 ձեռագրերի մանրանկարները, հեղինակը առաջ է քաշում XII—XIV դարերի հայ մանրանկարչության պատմությանը վերաբերող մի շարք կարևոր հարցեր: Այս աշխատությունը առանձնահատուկ տեղ է գրավում հայ մանրանկարչության ուսումնասիրության մեջ: Հայկական մանրանկարչությունը թերևս մինչ այդ նման մանրակրկիտ և խորր մասնագիտական քննարկման չէր ենթարկվել:

Արժեքավոր է պրոֆ. Տեր-Ներսեսյանի «Հայաստանը և Բյուզանդական կայսրությունը» աշխատությունը, որտեղ Հայաստանի և Բյուզանդական կայսրության միջև եղած հարաբերությունների պատմական տեսության հետ մեկտեղ առաջին անգամ քննարկվում են նաև միջնադարյան հայ արվեստի բոլոր բնագավառները (ճարտարապետությունը, քանդակագործությունը, որմնանկարչությունը և մանրանկարչությունը): Այս աշխատության հիմնական արժանիքներից մեկն այն է, որ թեպետ համառոտ, բայց շատ բովանդակալից կերպով քննարկվում են հայ միջնադարյան արվեստի (հատկապես մանրանկարչության) մի քանի կարևոր շրջաններն ու ուղղությունները²:

Վերջերս նրեանում ստացվեց Ս. Տեր-Ներսեսյանի հրապարակած վերջին հայագիտական աշխատությունը, որը նվիրված է Չեստեր Բիտի մասնավոր ժողովածուի հայերեն ձեռագրերի և պատառիկների գիտա-գեղարվեստական ուսումնասիրությանը:

Պրոֆ. Ս. Տեր-Ներսեսյանի վաստակի մեջ պետք է նշել այն հանգամանքը, որ վեր հանելով որոշ ժողովուրդների արվեստների ազդեցության բավականին բարդ և վիճելի հարցը, նա ցույց տվեց, որ հայ միջնադարյան մանրանկարչությունը, շնայած իր կրած որոշ ազդեցություններին, միանգամայն ինքնատիպ և ազգային արվեստ է:

Սեպտեմբերի 9-ին Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի դահլիճում պրոֆ. Տեր-Ներսեսյանը հրապարակային դասախոսություն կարդաց, որը նվիրված էր կի-

¹ The Date of the Initiale Miniatures of the Etchmiadzin Gospel. Art Bulletin, 1933, vol. XV, № 4.

² Das Etschmiadzin Evangeliar: Byzantische Denkmaler, 1891.

³ Une apologie des im age du VII siecl.

¹ Manuscrits armeniens illustres des XII-e, XIII-e et XIV-e, siecles de la bibliotheque des peres Mekhitaristes de Venis, Texte et Album, Paris, 1937.

² Armenia and the Byzantine Empire. A brief Study of Armenian Art and Civilization, Harvard Univ., 1945.

լիկյան հայկական մանրանկարչության պատմությանը, նա բնութագրեց կիլիկյան մանրանկարչությունը որպես հայ մանրանկարչության զարգացման զագաթնակետ և կանգ առավ XIII դ. հանրահռչակ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի ստեղծագործության վրա: Թորոս Ռոսլինի կողմից ստորագրված 7 ձեռագրերի մանրանկարների հիման վրա Ս. Տեր-Ներսեսյանը ներկայացրեց Ռոսլինի ստեղծագործության յուրահատուկ գծերը: Անդրադառնալով Թորոս Ռոսլինին վերագրված ձեռագրերի հարցին, նա հատկապես կանգ առավ Երուսաղեմի ս. Հակոբի վանքում պահպանվող 1272 թ. «Կենտանի ավետարանի» (ձեռ. № 2563) ու «Վաստակ իշխանի ավետարանի» (ձեռ. № 2568) և Երևանի Մատենադարանում պահպանվող 1287 թվականի Հովհաննես արքեպիսկոպոսի համար գրված ավետարանի մանրանկարների վրա: Նա ցույց տվեց այդ ձեռագրերի մանրանկարների միջև եղած բնահանրությունները: Բազմաթիվ այս ձեռագրերի մանրանկարները Թորոս Ռոսլինի կողմից ստորագրված ձեռագրերի մանրանկարների հետ, նա մանրամասնորեն բացահայտեց նրանց միջև եղած ոճական տարբերությունները: Այնուհետև հայտնեց այն միտքը, որ ինչպես վերը հիշված անստորագիր ձեռագրերի, այնպես էլ մի քանի այլ ձեռագրերի մանրանկարները, որոնք մինչև այժմ վերագրվել են Թորոս Ռոսլինին, իրենց ոճական առանձնահատկություններով միանգամայն տարբերվում են վերջինիս կողմից պատկերազարդված ձեռագրերի մանրանկարներից: Ս. Տեր-Ներսեսյանը ցույց տվեց, որ այս շտապագրված ձեռագրերը ուրիշ արվեստագետների գործեր են, և որ կիլիկյան մանրանկարչության մեջ դրանցով սկսվում է մի նոր հոսանք: Կիլիկյան մանրանկարչության հիմնական կենտրոնը համարվում էր Հոռմկլան, ուր աշխատել է Թորոս Ռոսլինը, իսկ այդ ձեռագրերը գրվել և պատկերազարդվել են մի այլ կենտրոնում, ամենայն հավանականությամբ, Կիլիկիայի մայ-

րաքաղաք Սիսում, որտեղ ավելի ուշեղ էր շփումը Արևմուտքի և Արևելքի հետ: Դասախոսը կանգ առավ նաև Վաշինգտոնում պահպանվող մի այլ ձեռագրի մանրանկարների վրա և ցույց տվեց, որ այդ մանրանկարները շատ ավելի մոտ են Թորոս Ռոսլինի ոճին: Եթե այդ ձեռագրի մանրանկարները չեն պատկանում անվանի մանրանկարչի վրձնին, ապա կասկածից դուրս է, որ դա Ռոսլինի դպրոցն է:

Երկրորդ դասախոսությունը, որը պրոֆ. Ս. Տեր-Ներսեսյանը կարդաց Մատենադարանում, նվիրված էր խիզանի մանրանկարչական դպրոցին: Զեկուցողը կանգ առավ միայն խիզանում գրված և պատկերազարդված ձեռագրերի վրա և անջատեց դրանք Վանի ու Ախթամարի ձեռագրերից, շնայած այն բանին, որ XIV դարում դրանք իրենց ոճական առանձնահատկություններով շատ մոտ են կանգնած: Բնութագրելով XIV դարի խիզանի մանրանկարչության առանձնահատկությունները, դասախոսը ցույց տվեց, որ XV դարում խիզանի ոճը դառնում է ավելի նրբագեղ և հանդես են գալիս ավելի կարող վարպետներ, ինչպես օրինակ, խաչատուր ծաղկողն է (1435 թվականի ձեռագիրը Երուսաղեմում, 1455 թվականի ձեռագիրը Բալթիմորում): XV դ. վերջում և XVI դարի սկզբում խիզանի մանրանկարչական դպրոցը նոր ծաղկում է ապրում: Այս շրջանի վարպետներից է Մարտիրոս խիզանեցին, որը ունեցել է իր դրպրոցը և աշակերտներ: խիզանում զարգացած ուղղությունը շարունակվում է մոտ 300 տարի, մինչև XVII դարը:

Երևանում գտնված ժամանակամիջոցում պրոֆ. Տեր-Ներսեսյանը եղավ Հայաստանի զանազան շրջաններում, որտեղ ուսումնասիրեց միջնադարյան հայկական ճարտարապետության և որմնանկարչության հուշարձանները, ինչպես և մանրամասն ծանոթացավ Մատենադարանի ձեռագրերի հարուստ ժողովածուներին:

Լ. ԱԶԱՐՅԱՆ